

«ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՈՒԽՏ»
(Քարոզ՝ խոսված Մայր տաճարում փետրվարի 13-ին)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:
«Յորում ցնծայր զուարճացեալ անտխրական խնդութեամբ»:

Սիրելի հավատացյալներ,

Սրբազան շարականագիրը Բուն Բարեկենդանի տոնին նվիրված մի հոգևոր բանաստեղծության մեջ ասում է, նկատի ունենալով առաջին մարդ՝ Ադամի եդեմական դրախտում ունեցած երանական կյանքը, «որտեղ (դրախտում) նա ցնծում էր զվարճանալով տխրություն չճանաչող խնդությամբ»:

Այսօր Բուն Բարեկենդան է, այսինքն՝ բարեկենդանների մեջ ամենակարևորը: Հայ Եկեղեցում կարևոր սրբոց տոների շաբաթապահքերից առաջ մեր եռամեծ հայրապետները տնօրինել են, որ հատուկ օրեր տվյալ պահքին նախորդող կիրակիներին՝ դրանով իսկ կարևորություն ընծայելով պահոց օրերին և ի մասնավորի տվյալ տոնին:

Բուն Բարեկենդանը մեծ պահքին անմիջապես նախորդող կիրակի օրն է: Հայ Եկեղեցին Բուն Բարեկենդանին նախորդող շաբաթ երեկոյան, որը նվիրված է 381 թվականին տեղի ունեցած Կոստանդնուպոլսի Տիեզերական Սուրբ ժողովին և դրան մասնակցող 150 հայրապետներին, համբարձի շարականի երգեցողությամբ իջեցնում է իր վարագույրները և փակում Սուրբ Սեղանները, նախապատրաստվելով ապաշխարության՝ գալիք օրերին: Մյուս կողմից, սակայն, Բուն Բարեկենդանի առիթով հավատացյալը մարմնով և հոգով զինվում է դիմագրավելու համար գալիք օրերի դժվարությունները: Բուն Բարեկենդանին հավատացյալները անվում են առավելագույն չափով, որպեսզի պահոց շրջանին փորձության չմատնվեն, նաև Բուն Բարեկեն-

դանին հոգեպես զինվում են՝ անդրադառնալով և նաև պատրաստվելով հետագա օրերի փորձություններին:

Պողոս առաքյալը ճաշու գրքում այսօր ընթերցված Կողոսացիներին ուղղյալ իր նամակում ասում է. «Մերկացել եք հին մարդուց իր գործերով և հագել եք նորը նորոգված գիտությամբ, ըստ իր Արարչի պատկերի»: Այսինքն՝ մեր միջից հին մեղավոր մարդուն դուրս վանենք և աղոթքի, ապաշխարության և զոհողության միջոցով Քրիստոսին ընդունենք և նրանով հիմնովին նորոգվենք:

Այս օրը հիմնականում անդրադարձի, ինքնաքննարկման ուխտի և հոգեկան վերանորոգման օր է: Այսօր է, որ որոշում ենք Քրիստոսով ապրելը և Քրիստոսին մեր մեջ ընդունելը: Այսօր է, որ ուխտ ենք դնում, որոշում կայացնում, պահեցողության շրջանին զոհողություններ հանձն առնելը և այդ որոշման վրա հաստատ մնալը: Այսօր է, որ մեր հոռի և վատ սովորություններից և բարքերից ձերբազատվելու ուխտ ենք անում, մեզ հեռու ենք պահում պղծությունից, խառնակությունից, մեր լեզուներին սանձ ենք դնում, որ այլևս չչարախոսենք, չանիծենք և չբամբասենք: Որոշում ենք տալիս լինել մարդասեր, ողորմած, գթած, բարեսեր, անհիշաչար և քաղցրաբարո: Այսպիսով, փորձում ենք հին մարդը իր բոլոր թերություններով մեր միջից վանել և առաքինություններով լի նոր մարդը մեր մեջ կերտել:

Քրիստոնեական կյանքում առանց ադամական մեղքից ձերբազատվելու, հնարավոր չէ փրկության հասնել: Բացի մկրտության խորհրդի միջոցով ադամական առհավական մեղքից սրբվելուց, կարևոր է, որևէ անձի մեջ ապրեցնենք մեր հավատի առաջնորդին ու մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին:

Պատմության ընթացքում շատ են այն դեպքերը, երբ անցյալի մեղավոր մարդիկ անդրադարձել են և քավության արժանացել՝ դառնալով նոր մարդ: Օրինակներից ամենաակնառուն ինքը՝ Պողոս առաքյալն է, նախկին հալածիչը քրիստոնյաների, նրանց ձերբակալողը, բանտարկողը և դատապարտողը՝ Սողոսը: Նա Դամասկոսի ճանապարհին հանկարծ լուսավորվում է, իր իսկ աչքերը լույսի շողքից շլանում են և կուրանում, հետո, սակայն, նա անդրադառնում է ճշմարտության լույսին, նրա աչքերը բացվում են Քրիստոսին, և նա դառնում է քրիստոնեության մեծագույն ջատագովներից մեկը՝ պատճառ դառնալով իր քարոզությամբ և նախանձախնդրությամբ իրեն տրված Քրիստոսի լույսը հասցնել մինչև հեռավոր ափերը այն ժամանակվա ծանոթ աշխարհի:

Արդյոք Հայոց Տրդատ Գ թագավորի պարագան ևս նույնը չէ՞ր: Նա 290 թվականին հատուկ հրովարտակով հալածանքի ենթարկեց Հայոց աշխարհի քրիստոնյաներին և սպանել տվեց Հռիփսիմյանց, Գայանյանց կույսերին՝ նրանց սրախողխող անելով: Նա մահվան դատապարտեց Գրիգոր Պարթևին՝ գցել տալով նրան Խոր Վիրապի գուրը: Սակայն նրա հոգում խղճահարությունը, մեղքի անդրադարձը և ապաշխարությամբ քավության հասնելու պահանջը հրաշք գործեցին, հիվանդացած հին մարդն առողջացավ Սուրբ Գրիգոր Լուսավորչի աղոթքով և միջնորդությամբ: Հին Տրդատ թագավորը, որ հեթանոս էր, վայրագ ու բիրտ, դարձավ մի նոր Տրդատ՝ բարեսեր և ողորմած:

Մեր կյանքում ներկա օրերին ևս այսպիսի հրաշքներ չեն պակասում: Ամեն օր և ամեն ժամ մեղավորի առաջ բացվում են երկնքի ողորմության դռները, և այնտեղից մաքրության, սրբության լույսը մեզ հրավիրում է դեպի վե՛ր, միշտ դեպի բարձրյալն Աստված:

Ճիշտ է, ճշմարտության և արդարության ճանապարհը նեղ է և փշոտ, քարքարոտ է և դժվարին: Սակայն կյանքում դժվարությունները հաղթահարողներն են միշտ հասնում իրենց նպատակին: Ուրեմն հասել է ապաշխարության, մեր հանցանքների համար թողություն խնդրելու ժամանակը: Աղոթքի և բարեգործության միջոցով ջանանք մեր ներքին աշխարհը, խոհն ու մտածումները մաքրել, ազատել մեղքի կապանքներից և Աստծո լույսի և շնորհաց ստացումով, մեր մեջ ապրեցնել նոր մարդը՝ տիպար առաջնորդ ունենալով Հիսուս Քրիստոսին:

Մեր Տերը ևս մարդկության մեղքերի քավության համար խաչը, այսինքն՝ մարդկության մեղքը ուսին բարձրացավ Գողգոթա, այնտեղ Իր անմեղ արյամբ սրբելու համար մեր մեղքերը: Նույն օրինակով ապաշխարության առաջիկա օրերին, մեր անձերը սրբենք, մաքրենք և թեթևացնենք մեղքերի ծանրությունից, մեր հոգին և մարմինը մաքրենք պահեցողությամբ և աղոթքով, և միշտ նայենք դեպի վեր, դեպի Գողգոթա և երբեք չտկարանանք, չընկրկենք, այլ, զորացած հավատով և իրարով, քայլենք առաջ՝ դեպի սրբություն և դեպի մեր Տերը:

Վստահ եմ, որ այս գիտակցությամբ և զոհողությամբ դուք կարող կլինեք ձեր կյանքի օրերին լույս դառնալ և ձեր կյանքով ճանապարհ բացել դեպի գալիքը:

«Քո լույսով, Քրիստոս, բոլորս լուսավորվեցինք և քո սուրբ Խաչին հավատացողներս Քեզ ապավինեցինք: Լսի՛ր մեզ, Աստված, Փրկիչ մեր, մեզ պարգևի՛ր քո խաղաղությունը և ողորմություն արա՛ մեզ, ո՛վ մարդասեր Տեր»: Ամեն:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊ. ՊՈՂԱՊԱՆՅԱՆ